**125. ԽԱՉՔԱՐ**, *գեղաքանդակ, կանգնած է նախորդի հյուսիսում. 5 տող.*



ԹՎ. :ՋԼԸ: (1489) [ԿԱՄ]ԱԻՆ [ԱՅ] ԵՍ ԽԱՉԱՏՈՒՐ ԵՐԷՑ ԵՐԿԻՆ [ԿԱ]Ն[Կ]ՆԵՑԻ ՉԽԱՉՍ ՀՈԳ[Ո]Յ ՓՐԿՈՒԹԵ. ՊԱՐՈՆ ՍՄՊԱՏԻՆ, ԻԻՐ ԹՈՒԻՆ.] ՈՎ ԿԱՐԴԷՔ ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Ծանոթ. *Թվականը գրված է նախորդի ձևով։ Առաջին տողում անհասկանալի է վերջին ԵՐԿԻՆ բառը. Երկրորդ տողում գրիչը ԽԱՉՍ բառը սխալմամբ ՍԱՉՍ է գրել։*

*Հրատ. Ջալալեանց Բ, 138։ Քաջբերունի, Արարատ, Ե, 284 Ալիշան Լուսանկ. 31*

**126. ԽԱՉՔԱՐ**. *հասարակ, ընկած է նախորդ երկուսի արանքում, տակին 3 տող.*



Ե[Ս] ԱՐԳՈՒԹ[Ս] ԿԱ[Ն]ԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ ԻՄ ԲԱԲԻՆ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, Ե, 285։ Ալիշան 111։*

**127. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *գտնվելիս է եղել գյուղատեղի ավերակ եկեղեցու հարավային պատի մոտ. վրան ձիավոր՝ զինված նիզակով.*

Ես Մարգարս կանգնեցի զխաչս եղբաւրս Թադէոսին,
որէ որդի Մելիք բեգին. :ՌԾԲ: թվին: (1602):

*Հրատ. Ջալալեանց Բ, 138։ Քաջբերունի, Արարատ, Ե, 285։*

## 14. ՀԵՐՀԵՐ

*Վայոց ձորի հին և հուշարձաններով հարուստ գյուղերից է։ Այն Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված է Երերն, իսկ արձանագրությունների մեջ Երերան ձևերով, որը հետագայում, ժողովրդական արտասանությամբ՝ դարձել է Հերհեր։*

*Գյուղի շրջապատում, կանգուն հուշարձաններից բացի կան նաև 2—3 գյուղատեղերի մնացորդներ, մի քանի գերեզմանատներ և շատ հին ավերակներ։ Սակայն պահպանված արձանագրություններից ամենահինը վերաբերում է 1149 թվականին։*

*Հերհեր գյուղի և համանուն գետահովտի ամենածաղկուն շրջանը, համաձայն հուշարձանների և նրանց արձանագրությունների, եղել են XIII դարի երկրորդ կեսից սկսած մինչև XIV դարի կեսերը։ Այդ ամբողջ հովիտն իր մի քանի գյուղերով կազմել են Օրբելյան տոհմի վասալ իշխան Շահուռնցիների սիրույթը։*

*Շահուռնցի իշխանները եղել են Օրբելյանների «ասպարապետները». ինչպես Հերհերի, այնպես էլ հովտի այլ վայրերի արձանագրություններից մի քանիսի մեջ հիշատակում է այս փաստը և այն, որ շրջանից շատ զինվորականներ ու «հեծյալներ» զոհվել են պատերազմներում, կամ գերի ընկել։*

Հերհեր գյուղում և շրջակայքում արձանագրություններ պարունակող հուշարձանները ժամանակագրական կարգով հետևյալներն են.

1. Կապույտ բերդը, փոքրիկ ամրոց է, որը գտնվում է գյուղից արևելք, մոտ երկու կիլոմետր հեռու՝ մի բարձր բլրի գագաթին։ Այստեղ կա մի ավերակ մատուռ՝ 3 խաչքարով որոնցից մեկը, համաձայն արձանագրության, պատկանում է 1147 թվականին։

2. Կապույտ բերդի սարալանջին մի մեծ ժայռաբեկորի վրա կա ընդարձակ մի արձանագրություն՝ 1149 թ.։

3. Գյուղատեղ և խաչքարեր, գտնվում են գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու, խճուղու եզրին, ուր կան արձանագրված խաչքարեր, հինը՝ 1281 թ.։

4. Ս. Սիոն վանք, գտնվում է գյուղից մեկ կիլոմետր հեռու, դեպի հյուսիս. բաղկացած է երեք իրար կից փոքր, թաղածածկ շենքերից։ Դրանցից հնագույնը և մեծը կենտրոնի եկեղեցին է, որը կոչվել է ս. Հովհաննես։ Շինված է կոփածո քարերով, այդ պատճառով էլ զուրկ է արձանագրություններից։ Շինության ժամանակն անհայտ է, միակ արձանագրությունը վերաբերում է XIII դարի վերջերին կատարած նորոգումներին։

Երկրորդ եկեղեցին կից է ս. Հովհաննեսին հյուսիսից. Շինված է նույնպես կոփածո քարերով և անարձանագիր է։ Շինության ժամանակն անորոշ է։

Երրորդ եկեղեցին կից է ս. Հովհաննեսին հարավից, շինված է սրբատաշ քարերով. ներքուստ և արտաքուստ ունի բազմաթիվ արձանագրություններ. շինել են շահոռնսի իշխանները 1282 թ.։

Վանքի ընդարձակ բակի հյուսիսային մասը վիս է, որտեղ պահպանվել են բազմաթիվ լսյերի և անտեսական այլ շենքերի մնացորդները, իսկ արևմտյան մասում տարածվում է գերեզմանատունը, ուր կան բազմաթիվ տապանաքարեր և խաչքարեր՝ մի մասն արձանագրություններով։

Վանքը հյուսիսից և արևմուտքից շրջապատված է եղել պարիսպներով, իսկ մյուս երկու կողմերից պաշտպանվել է խոր ձորերով։

Այս հուշարձանի հիմնադրման և պատմության վերաբերյալ բանասիրության մեջ երկու սխալ կարծիքներ գոյություն ունեն. երկուսն էլ հիմնված են Ստ. Օրբելյանի հաղորդածների սխալ մեկնաբանման վրա։ Պատմագիրը նկարագրելով Սիոնի վանքը, նրա հիմնադրման մասին գրում է. «...ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազփառոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն[1]»։ Ալիշանը և Լալայանը, հավանաբար, շփոթելով Սիւնի և Սիոն կոչումները պատմագրի խոսքերը վերագրել են Հերհերի այս հուշարձանին[2]։ Սիւնի վանքը գտնվում է պատմական Ծղուկ գավառում, այժմյան Սիսիանի շրջանի համանուն կենտրոնում։

Ստ. Օրբելյանը նկարագրելով սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի եղեռնական մահը 735 թ. ավելացնում է, որ նրա դիակն ուզեցին տեղափոխել «ի սուրբ մենարանն ի լեառն կոչեցեալ Սիոն, որ պայծառանայր ճգնաւոր արամբք յայնմ ժամանակի», որոնցից նշանավոր՝ էր «ճգնաւորն աստուծոյ Նոււ, որ էր բաղում ամօք բնակեալ ի սուրբ լեառն Սիոն»։

Պատմագրի այս խոսքերից պարզ երևում է, որ ճգնավորների այդ մենարանը գտնվելիս է եղել Սիոն կոչվող լեռան վրա։ Ջալալյանն ու Ալիշանը լեռան և Հերհերի վանքի Սիոն անունների նույնությունից ելնելով, ենթադրում են, որ պատմագրի խոսքերը վերաբերում են այս վանքին։ Հերհերի այս վանքը շինված է տափարակ դաշտավայրը կտրող երկու հեղեղատների միացումից առաջացած եռանկյունու վրա։ Սիոն լեռը, հավանաբար, վանքից արևմուտք բարձրացող, այժմ Դալիկ թափա կոչվող, կոնաձև բլուրն է, որի գագաթի հրաբխային խառնարանի կաթսայի մեջ գտնվում են եկեղեցու ավերակները, որը և պետք է Նուի և այլ ճգնավորների մենարանի մնացորդը լինի։

5. Ս. Գեվորգ եկեղեցի, գյուղի մեջ. հիմնովին վերանորոգված է XIX դարում։ Պատերի մեջ օգտագործվել են հին խաչքարեր. բակում ես կանգնած կան խաչքարեր, հինը 1281 թ.։

6. Խաչքարեր երեք հատ. առանձնակի կանգնեցված են եղել գյուղի փողոցներում։ Այժմ մեկն է միայն կանգուն. շինված է 1282 թ.։

[1] Ստ. Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 338, Թիֆլիս, 1910 թ.
[2] Ալիշան, Սիսական, 113, Լալայան, Ազգ. հանդ. XII, 264։

*7. Ս. Գրիգոր Լուսավորիչ, փոքր եկեղեցի, որի պատերի միայն կեսերն են պահպանվել, գտնվում է գյուղի հարավային եզրին, այգիների մեջ. շինված է 1296 թվականին։*

*8. Ս. Գևորգ, մատուռ (կոչվում է Ջիքի վանք). գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հարավ՝ մի բլրի սրածայր գագաթին։ Բաղկացած է փոքր մատուռից և նրան արևմուտքից հարեան սրահից։ Շինված են միաժամանակ, սրբատաշ և մեծ քարերով. երկթեք ծածկի յուրաքանչյուր սալը միակտուր է ամբողջ թեքության վրա. շինված է 1297 թվականին։*

*Հերհեր գյուղից և շրջակայքից մեր ժողովածուում ամփոփված են 63 արձանագրություն, որոնցից 29-ը հրատարակվում են առաջին անգամ։*

## ՀԵՐՀԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***128. ԺԱՅՌԱԲԵԿՈՐԻ ՎՐԱ**, գյուղից արևելք, մոտ երկու կիլոմետր հեռու, Կոտույա բերդի ստորալանջին. 14 տող.*



Ի ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ :ՇՂԸ: (1149) ԵՍ ԳՐԻԳՈՐ ԱՆԱՐԺԱՆ| ԿՐԱՒՆԱՒՈՐ Ի ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ ՄԵԾԱՀԱՄ|ԲԱՒ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵԿԻ Ի ՏԵՂԻ ՅԱՅՍ ԵՒ ԲՆԱԿԵՑԱ Ի ՏԱՆ ՄԵԾԱՊԱՏԻՎ| ՔԱՀԱՆԱՒ ԳԱԳԻԿ ԻՐԻՑՈՒ, ԱԹՈՌԱԿԱԼ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՒ ԻՇԽԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ. ԵՒ ԵՂԷ ԵՍ ԸՆԴ ԺԱՌԱՆԳՈՐԴՍ ՆՈՐԱ, ԿԱՑԻ Ի ՄԻԱՍԻՆ, ԵՒ ԷՐ ՊԱԿԱՍ|ԵԱԼ ՔԱՀԱՆԱ Ի ՏԱՆԷ ՆՈՐԱ Ի ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑ. ՍԱՐԿԱՒԱԳՆ ՏՂԱ| ՀԱՍԱԿԱՒ ԷԱՒ ՉՊԱՏԻՎ ՔԱՀԱՆԱՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԻՍԱՒՐԵԱ ԺԱՄԱՆ|ԱԿԱՒ ՓՈԽԵՑԱՒ ԱՌ ՔՍ̅. ԵՒ ԷԱԾ ԽԱՒԱՐ ՑԵՏԱՍՆԱՑ ԻՒՐՈՑ. ԵՒ ԱՇԽԵՆ, ՔՈՅՐ ՆՈՐԱ, ԽԱՒ|ԱՐԵԱԼ Ի ՅԱՁԱՑ ՏԵՍՈՒԹԵՆԷ, ԵՒ ՆԱ ԷՐ ԼՈՅՍ ԿԵՆԱՑ ՆՈՐԱ. ՇԻՋԱՒ ԼՈՅՍՆ ԻՄ ԵՒ |ՆՎԱՂԵՑԱՒ-ՀՈԳԻ ԻՄ Ի ԳԱՌՆ ԱՐՏԱՍՎԱՑ ԵՒ ՈՏԱՑԱ ԻՆՁ ՄԽԻԹԱՐ ՇԻՆ|ԵԼ ՉԵԿԵՂԵՑԻՍ Ի ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈՅ ԻՄՈՅ Ի ՅԱՒԳՆՈՒԹԻՒՆ| ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ Ի ՀԱՍՏ⌊ԱՏ⌋ՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՍ ԻՄՈՅ ԳՐԻԳՈՐՈՅ ԵՒ ՉԱ ՌԱՔՈՒՄՆ ՍԱՐԳՍԻ՝ ՎԵՐԱԿԱՑՎԻ ԺՈՂՈՎՈՅՍ, ԵՒ ԱՅԼ ՏԱՆՈՒՏԵՐԱՑՍ.| ԱՇԽԷՆ ԴՈՒՍՏՐ ԳԱԳԻԿ ԻՐԻՑՈՅ ԵՒ ՔՈՅՐ ԵՄՔ. ՈՅՔ ԿԱՐԴԱ⌊ՑՔ ՅԻՇԵՑԷՔ⌋.

Մանոթ. *Ալիշանը այս և հաջորդ № 129 արձանագրության մեջ հիշատակված անձնանունների նույնության հիման վրա թվականը համարում է ։ՈՂԲ։, որ ճիշտ չէ, ինչպես պարզ երևում է գծագրության և լուսանկարների վրա։*

*Հրատ. Քաջբերունի. Արարատ. Զ. 339։ Ալիշան, 112։ Լուսանկ. 35*

***129. ԽԱՉՔԱՐ**, գտնվում է Կալուլյա բերդի մեջ՝ ավերակ մատուռում.*

Ես Մարգարէս, որդի Գագիկ Երիցոյ, աքսաւկալի կեցոյ
(եկեղեցոյ) կանգնեցի զխա(չս). թվիս ։ՈՂՁ։ (1247)։

Մանոթ. *Տեղում ստուգելու հնարավորություն չենք ունեցել. կասկածելի ենք համարում թվականը։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 229։ Ալիշան. Սիսական, 112։*
МАК, *139 (սխալմամբ ս. Աստվածածնի պատին համարելով)։*




***130. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է գյուղից հարավ, մոտ երկու կիլոմետր հեռու, խճուղու եզրին, գրված է բոլոր չորս շրջանակների վրա։*

Ի Թ̅Վ. ։ՉԼ։ (1281) ԵՍ ՔԱՏԼ ԿԱՆԿՆ{ԵՑԻ}
ԶԽԱՉՍ| ԲԱՐԷԽԱՒՍ| ԻՆՉ ԵՒ ԱՄՈՒ{ՍՆՈ ԻՄՈ
ՄԱՄԱՔԻՆ. ՑԻՇ{ԵՑԷՔ}։

Մանոթ. *Առանձնապես հետաքրքիր է խաչքարի պատվանդանը, որը ջրաղացի գործածված քար է. ամբողջական է։*




***131. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է նախորդի մոտ, թեքված դեպի հետ, շրջանակներին և խաչերի թևերի արանքներում խառն գրված.*

ԵՍ ՅՈՎԱՆԷՍ ՍՒ ԲԱՐԷՈՔՍ ԿԱՆԿ{Ն}ԵՑԱՔ
ԽԱՉՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴՈՒՆԱՑ ՄԵՐՈՑ։
Թ̅Վ{Ի}Ս ։ՉԼԳ։ (1284)

*135. ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ հարավային պատի ամբողջ երկարությամբ, մասամբ նաև արևմտյան ու բեմի պատերին, տողերը 10 տող:*



ԿԱՄԱՒ ՀԶՕՐԻՆ ԱՅ. [Ա]ՅՍ ԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐՔԱՅԱԶՆՈՒՔ ՊԱՐՈՆԻՆ ՎԱՐՀԱՄԱՅ, ՈՐԴՈՅ ՎԱՍԱԿԱՅ, ԹՈՌՆ ՄԵԾԻՆ ՍԱԳԵՍ-ՏՐՈՅԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՍԱՆԴՂՏՈՅ ԱՄՕ[Ւ]ՍՆ[Ո]Յ ԻՒՐՈՅ, ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ՊՏՂՈՅ ՆՈՑԱՅ ՈՒՔԱՆՆԱՅ, ԵՒ ՔԱՋԱՋԱՒՐԻՆ ԵՒ ՄԵԾ ԱՍՊԱՐԱՊԵՏԻՆ ՎԱՐ-[Հ]ԱՄԱ, ԵՒ ՔՈՅԱՄԷՐ ՍԱԻՐՆ ԻԵՐՈ[Յ] ՄԱՄՔԱՆԱՅ, ԵՒ ԲԱՐԵՏՈՀՄԻԿ ԱՒՐԻՈՐԴ ԱՄՈՒՍՄՆՈՅ ԻՒՐՈՅ ԳԻՆՑԱՅԻՆ, ՈՐ ՄԵԾԱՋԱՆ ԱՇԽԱՏՈՒԹ ԵԱՄՐ. ՇԻՆԵՑԻՆ ՋԵԿԵՂԵՑԻՍ [ԵՒ] ԲԱԶՈՒՄ ՍՊԱՍՈՒՔ ԶԱՐԴԱՐԵՑԻՆ՝ ՅԱՂԱԳՍ ԱՐՔԱՅՈՒԹԵ. ՅՈՒՍՈՅՆ ԵՒ ԵՐԿԱՐՈՒԹԵ. ԿԵՆԱՅ ՊԻՐԵԱՆՑ ԵՒ, ԶԱՐՈՒՑՆ ԻՒՐԵԱՆՑ ՈՒՔԱՆՆԱ[Յ] ԵՒ ԵՏՈՒՆ . . . . . . ՆՈՒԷՐՍ Ի ՍՐ. ՈՒԽՏՍ ՁԱՔԱՐԱԹԱՂԻՆ ԱՅԳԻՆ ՎԵՐԻՆ ՀԱՏՈՒԱԾՆ, . . . . . . . . . ԿՈՒ ԱՐՏԻՎՆ, . . . . ԵՁՐՆ, ՈՐ ՄԵԾ ԱՌՈՒՅԻՆ ԳՆԱԼՈՒ . . . . . ՄՆ . . . . ՐՆԿՈՅՁԻՆ. ՅԻՐԻՑԱԿԱՑԵՐՆ :Գ: ՀՈՂՍ ՃԵՂՐՏ . . . . . . . ՁԵՑ ԱՐՓԱ . . . . [Ա]ԹՈՂԾԻ-ՑՆ ՄԻՆՁԵՒ Ի ՎԱՆՔՆ . . . . . . . . ՀԱՏՈՒԱԾԱՐ ՊԱՐՈՆԱՑՆ :Գ: ՊԱՏԱՐԱԳ . . . . . . . . . ԹԵՆ :Գ: ՊԱՏԱՐԱԳ ՈՒՔԱՆՆԱՅ . . . . . ՋԱՏԿԻՆ :Գ: ՄԱՄՔԱՆ[ԱՅ] ՎԱՐԴԱՊԱՏՈՒԻՆ . . . . ԻՆՉ ԵՏ ՍԱՅԻՆ . . . . . ԿԱՏԱՐ[ԱՐ]ԵՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԳԱՏԻ . . . ԴԱՏԱՍՏԱՆ[Ի]Ն. ԵՒ ԹՎ: ՅԱՆԴԻՄԱՆԻՆ . . . . . . . . . ՅՍԱՅ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ . . . ԻՆՁՈՎ[Ն] ԵԳԻՑԻ[Ն] ՄԱՐՄՆՈՎ. ԹՎ. :ՉԼԲ: (1283) ԳՐԵՑԱՒ.

*Ծանոթ. Գծագրության մեջ վերին կարճ տողը գրված է առաջին տողի գլխաց, բեմի կողմի վրա և նոր լուսամուտով բաժանված է երկու մասի:*
*Հինգերորդից սկսած տողերը շարունակվել են արևմտյան պատի վրա:*
*Բառերը խիստ հաղթահարված են և տեղ-տեղ հետևները քայքայվին (?) ժամանակ:*

Հրատ. Ջալալեանց, II, 111; Ճամբրանեան, Արարատ, 1882, Ց. 222. ... 111. MAK. 138–139; Լաուշէ. 38, 38ա

**132. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** *եկեղեցու արևմտյան պատի վերին մասում, արտաքուստ, եկեղեցու շինության թվականը.*



ԹՎ. ՉԼԱ (1282)։

*Ծանոթ. Գրված է երեսպատման քառակուսի մեծ քարի չորս անկյուններում, միակարգ տառով, որի կենտրոնում թևատարած արծվի բարձրաքանդակ է, ճանկերում բռնած խոյ։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889. Թիվ Զ, 322, Ալիշան 113։*

**133. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ. 7 տող.*



ԹՎ. ՉԸ (1259) ԵՍ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍ, ՍԻՒՆԵՑԱՑ ԱՐ|ՔԻԵՊԻՍԿՈՊՈՍ, ԶՄԵ⌊Ր⌋ ՀԵՐ⌊Ե⌋ՆԻ| ԳԵՂՆ ԶԱԿՈՂ Ի ՎԱՆ[Ն]Ս ՍԲ. ՈՒԽՏ⌊Ի⌋Ս՝ ՏՎԱՔ ՀԵՐԵՆԻՔՍ ԺՈՂՈՎՈՒՐԴ. ՏՎԻ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ. ՈՎ ՈՐ ՀԱԿԱՌ⌊Ա⌋ԿՍ :ՅԺԸ:| ՍՈՒՐԲ ՀԱՐԱՊԵՏԱՑ ՆԶ|ՈՎԱԾ ⌊Է⌋։

*Ծանոթ. Գրված է երկու գրչի ձեռքով։ Միջին մասը կատարված է արվեստով, իսկ սկզբի ու վերջի մասերը՝ մակերեսորեն և անարվեստ։ Սկզբից գրված թվականը գրել է «անարվեստ» գրիչը և անպայման տասնավորը բաց է թողել։ Հիշատակվող տեր Ստեփանոս արքեպիսկոպոսին նույնացնում ենք պատմագիր Ստ. Օրբելյանի հետ. նախ՝ որովհետև այս եկեղեցին շինված է ՉԼԱ = 1282 թ., հետևաբար նրա պատին ՉԸ = 1259 թ. արձանագրություն գրվել չէր կարող. ապա՝ որովհետև պատմագիրն է, որը ուրիշ վանքերի ևս իր հայրենի ժառանգությունից գյուղեր է նվիրել, վերջապես, որովհետև այդ թվականներին Սյունիքում այլ Ստեփանոս արքեպիսկոպոս չի եղել։*

*Ս. Օրբելյանը օծվել է 1286 թ. հետևաբար արձանագրության թվականի մեջ պակաս տասնավորը պետք է լինի առնվազն Լ և առավելն Խ, որով ստույգ թվականը կլինի ՉԼԸ կամ ՉԽԸ։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889 Թ. Զ, 322, Ալիշան, 113, MAK, 139։*
Լուսանկ. 36

**134. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևմտյան պատի հարավային մասում, արտաքուստ, նախորդի վերջին տողի կեսից սկսած. 5 տող.*



ԵՍ ՅԱԿՈԲ ՄԻ|ԱԲԱՆԵՑԱ ՍԲ. ՈՒԽՏԻ|Ս, ՄԻԱԲԱՆՔ :Ա: ԺԱՄ| ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՍԲ.| ՅԱԿՈԲԻՆ ՏՈՒՆԻՆ։

*Ծանոթ. Գրված է նախորդի կիսատ տողից սկսած, որպես նրա շարունակություն և նույն գրչի ձեռքով։ Հետևաբար ժամանակակից է նրան՝ 1289—1299 թվականներին։*

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1899 Զ, 322, Ալիշան, 113, MAK, 139,*
Լուսանկ. 37

**136. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հյուսիսային աբսիդի պատվանդանի վրա, ներքուստ, 5 տող.*



ՅԱՆՈՒՆ ԱԾ ԵՍ ԿՈՒԿՈՐ ՄԱՄԱՅՍ ԶԿՈՒԱՐՏ[Ի]Ն ՀՈԳՒՆ ՏՎԱՔ Ի ՍԲ ՈՒԽՏՍ. ՎԱՐԴ[ԱՊԵՏ], ՄԻԱՅԲԱՆՔՍ Զ[ՍԲ]. ՍԱՐԳՍԻՆ :Բ: ՊԱՏԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Ա: Խ[Ե]ՐԽԱՆԻՆ :Ա: ԶՈՒԶԻՆՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ[ ՅԱՅ. ԹՎ. :ՉԽԶ: (1297):

Ծանոթ. *Այս եկեղեցու աբսիդը առանձնահատուկ ձևով է կառուցված։ Այն միջնորմով բաժանված է երկու մասի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր վեմ քարը։*

*Հրատ. Ջալալեանց. Բ, 140։ Ալիշան. Սիսական, 114։*

**137. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևմտյան պատի հյուսիսային մասում արտաքուստ, 3 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԿՈԿՈՐՍ ԶԵՂԲԱՅՐԿԱ. ՀՈԳՒՆ ՅԱԳԱՐՏԱՓ[Ի] ՈՍԿՈՎ ԳՆԵՑԻ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎԻ. ՄԻԱԲԱՆՔ :Ա: ՊԱՏԱՐԱԳ ՏՎԻՆ ԻՄ ՀԱՒՐՆ ՍԱՐԳՍԻՆ՝ ՍԲ ԳԵ[Ո]ՐԳԻՆ ՏԱ[Ի]ՆԻ[Ն]. ԿԱՏ[ԱՐԻՉՔՆ] ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ։

Ծանոթ. *Կարծում ենք, որ նվիրատու ԿՈԿՈՐԸ նախորդ արձանագրության մեջ հիշատակված ԿՈԿՈՐՆ է. հավանաբար՝ ժամանակակից նրան։*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 142։ Ալիշան, Սիսական, 117։*

Լուսանկ. 39

**138. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հարավային աբսիդի պատվանդանի վրա, ներքուստ, 5 տող.*



ԿԱՄԱՒ ՀԶԱՒՐԻՆ ԱԾ. ԵՍ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԶԱՍԱՐՆՈՑ[Ի]Ս ԶԱՐԷՔՆ Ի ՀԻՒՍՆԷՆ ԳՆԵՑԻ, [Ի] ՍԲ. ՈՒԽՏՍ ՏՎԻ. ՄԻ[Ա]ԲԱՆՔՍ ԶՍԲ. ԱԾԱԾՆԻՆ ՓՈԽՄԱՆՆ :Ա: ՊԱՏԱՐ[Ա]Գ ԻՆՁ ՊԱՐԳԵՒԵՑԻՆ. ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱՅ. ԱՄԷՆ ՏԱՐԻ. ԹՎ. :ՉԾԷ: (1308):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 140։ Ալիշան, 114։* MAK, *138։*

Լուսանկ. 40։

***139. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ հարավային պատի ստորին մասում, ներքուստ, 7 տող.***



. . . ԱՊԱԻՐՍ ԼՃԻ ՁՄԵՐ ԱՑԳԻՆ . .
ԳՆԱԾ Ի ՊԱՐՈՆԱՑԷՆ Ի| ՊԱՊԱՔԷՆ . . .|
Վ, ԱՐՂԱՄԻ ՍԲ. ՈՒԽՏՍ ՏՎԻ. Վ,ԱՐԴԱՊԵ,Տ.
ՄԻԱԲԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Դ: ՊԱՏԱՐԱԳ
ՍԲ. ՀՈԳՈՅ| ԻՋՄԱՆ. :Բ: ԻՄ ՀԱԻՐ ՄԱԻՐՆ
:Բ: ԻՄ Գ,Է,ՏԻՆ ԻՇԽԱՆԱԻՐԷ ԱՆ|ԽԱՓԱՆ.
ՈՎ ՁԱՑՆ ՍՑԳԻ,Ն, ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՆԷ ՑՍՑ ՆԶՈՎԵԼ|
ԵՂԻՑԻ. ԹՎ. :ՉՀ: (1321):

Լուսանկ. 41

***140. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ հարավային պատի կենտրոնում, ներքուստ, 5 տող.***



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ . . . . ՋՈՒԼՋԻՄ
ՀՈԳՈՅՆ . . . . . ՀԱՍՏԱՏԵՑԻՆ . . .
. . . ՀՈԳՈՅՍ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԻՆ Ի ՏԷ:

Ծանոթ. *Գրված է նախորդի — ՉՀ և շինարարական մեծ արձանագրության — ՉԼԲ տարանքում, հավանաբար՝* XIII *դարի վերջերին։*

*Այս և նախորդ արձանագրությունը դեռևս Ջալալյանցի գրքում հիշատակվում են որպես եղծված և անվերծանելի։*

***141. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ հյուսիսային պատի արևելյան մասում, ներքուստ, 5 տող.***



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԲԵՐԴԱՒԱԳՍ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ| ԽԱԹՈՒՆ ՁՈՐ ՑՈՎԱՆՆԷՍ
Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎԱՔ| ՉԻՆՉ ԱՅԼ ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ ԿԷՐ. ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔ
:Բ: ՊԱՏ|ԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ՑՈՒ ԱՆՈՒՆ ՏԱՒԻՆ :Ա: ԻՆՁ| ԲԵՐԴԱՒ,ԱԳԻՍ,
:Ա: ԽԱԹ,ՈՒՆԻՆ,. ԿԱՏԱՐԻՉՔ ԱԻՐՀՆԻՆ ՑԱՅ Ի ԹՎ. :ՉՀ: (1321):

Հրատ. *Ջալալեանց, Բ, 140։ Ալիշան, 113։* MAK, *137։*

Լուսանկ. 42

**142. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հյուսիսային պատի արևելյան մասում, ներքուստ, նախորդի տակ, 3—4 տող.*



ԵՍ ԱՄԻՐՊԷԿՍ ԶԻՄ ՀԱՒՐ ՀՈԳՈՅ ԲԱԺԻՆ Ի ՍԲ| [ՈՒԽՏՍ ՏՎԻ]. ՎԱՐԴԱՊԵՏ, [ՄԻԱԲԱՆ]Ք ՍԱՀՄԱՆԵՑԻՆ :Ա:| [ՊԱՏԱՐԱԳ . . . . . . . ՅՈՀԱՆՈՒ ՏԱՒՆ[ԻՆ] ԱՄԵ[Ն] ՏԱՐ[Ի]:

*Ծանոթ. Գրված է նախորդի՝ ՉՀ, և հաջորդի՝ ՉՀԵ: արանքում, հետևաբար այդ երկա թվականների սահմանում պետք է գրված լինի, մանավանդ որ նույն գրչի փորագրածն է:*

Լուսանկ. 43

**143. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հյուսիսային պատի արևելյան մասում, նախորդի տակ, ներքուստ, 4 տող.*



[ԵՍ] ՍԱԹՈՒՆ, ԻՄ ՈՐԴԻՔ ՍԱՐԳ[ԻՍ], ՇԱՀ|ԷՐ[Ղ]. ԶՄԵՐ ՍԲ ՍԻՈՆԻ ՏԱԿԻ ՀՈՂՆ Ի ՍԲ| ՈՒԽՏՍ ՏՎԻՔ. ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻ[Ա]ԲԱՆՔ :Ա: ՊԱՏԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑ|ԻՆ ՅԱԿՈԲԱ, ՎԱՐԴԱՆ[Ա]Ց ՏԱՒՆ[ԻՆ] ԱՆԽԱՓԱՆ. Ի ԹՎ. :ՉՀԵ: (1326):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 141, Ալիշան, 115, MAK, 137:*

Լուսանկ. 44

**144. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հյուսիսային պատի արևելյան մասում, նախորդի տակ, ներքուստ, 3 տող.*



ԵՍ ԴԱՒԼԱԹ ԶԻՄ ՀՈԳՈՑ ԲԱԺԻՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ| ՏՎԻ. ՎԱՐԴԱՊԵՏ. ՄԻԱԲ[Ա]ՆՔ :Ա: ՊԱՏԱՐԱԳ ՏՎԻՆ ԻՆՁ ՍԲ ՀՈՒՓՍԻ[ՄԷԻ] ՏԱՒՆ[Ի]Ն:

*Ծանոթ. Գրված է նախորդի տակին, որպես նրա շարունակությունը և նույն գրչի ձեռքով, հետևաբար և ժամանակակից է նրան — ՉՀԵ — թվին, 1326:*

Հրատ. MAK, 137:

Լուսանկ. 45

*145. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, 14 տող.*



ԿԱՄԱՒ ՀԶԱՒՐԻՆ ԱՅ ԵՍ ՍՄԲԱՏ
ՈՐԴԻ ԼԻՊԱՐՏԻ, ՑԱԶԳԷ ԱՒՐԲԷ-
ԼԵՆՑ :ԺԲ: ՏԱՐԻ ՄՍՐ ԳԵՐԻ ԿԱՑԻ|
ԱՅ ԿԱՄԱՒՔՆ ԱԶԱՏԵ[Ց]ԱՅ.....
ԶԱՄՈՒՍԻՆՆ ԻՄՈ... ԹՈՂԻ.....
ԵՒ ՑԵՏ :Բ: ԱՄ|Ի ՓՈԽԵՑԱՒ Ի
ՔՍ.... ԵՂԲԱՐՑՆ ԲԱԺ ԱՆԵՑԱՑ
... ԻՆՉ ՀԱՍԱՒ. ԵՍ ՍՄԲԱ|Տ
ԶԳԻՒԻՆ ՔԹԻՆ... ՀՈՂՆ ՈՐ
ԱԾԱԾՆ|ԻՍ ՏՎԻ ԱՆՁԱՐ .....
ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՄԻԱ|ԲԱՆՔՍ
ԵՏՈՒՆ ԱՒ|Ր|... ՀԱՄԲ|ԱՐՁՄԱՆՆ
:Ա: ԻՆՉ..... ՈՎ ԻՄ| ԱԶԳԷ ԿԱՄ
Ի ՑԱՒՏԱՐԱՑ Ա|ՅՍ ԵԿԵՂ|ԵՑՈՅ
ՀԱՆԵԼ ԶՄԱՆԱՑ ԱՅ ԱՄԵՆԱԿԱԼ
ԲԵՐԱՆԷՆ ՆԶՈՎԱԾ ԵՂ|ԻՑԻ ԵՒ
:ՅԺԸ: ՀԱՅՐ|ԱՊԵՏՈՑՆ| ԿԱՊԱԾ|.
Ի ԹՎ ՀԱՅՈՑ :ՉԿԶ: (1317):

Ծանոթ. *Արձանագրության միջին մասերը խիստ հողմնահարված են։*

Հրատ. *Ջալալեանց, Բ, 111։ Ալիշան, 115։* MAK, *138։*

Լուսանկ. 46

*146. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ արևմտյան պատի հյուսիսային մասում (կից մուտքին), արտաքուստ, 14 տող.*



ՓՈԽՍԱՆ ՍԾԱԾՆԻ| ՇԱԲ|ԱԹ| ԱՒՐՆ.| ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ
ԳՐԻ|ԳՈՐ, ԳԱՓԻՆ ՈՐԴԻ Ց|ԱՌԻՆՃ ԽԱՋԻ ՏԱՓԻ| ԱՑԳԻՆ
Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎ|Ի ՎԱՍՆ ԱՍՈՒՍՆԻՆ ԻՄ ԱՍՓ|ԻՆ.
ՎԱՐԴԱՊԵՏ, ՍԻԱԲԱՆՔ ՍԱՀ|ՄԱՆԵՑԻՆ :Բ: ՊԱՏԱՐԱԳ
ԱՍՓ|ԻՆ|. ԿԱՏԱՐԻՉՔ Ա|Ի|ՐՀ|Ն|ԻՆ ՑԱՑ:| ՈՎ ԶԱՑՆ
ԱՑԳԻՆ ԱՅՍ ՈՒԽՏԷՍ ՀԱՆԷ, ՅԱՅ ՆԶՈ|ՎԱԾ ԵՂԻՑԻ.
ԹՎ :Չ|ԿԶ: (1317):

Ծանոթ. *Բնագրում մոռացել են սահմանված պատարագների օրը՝ նշել, հետո ավելացրել են վերևից՝ երկու տողով։*

Հրատ. *Ջալալեանց, Բ, 142։ Ալիշան, 116։* MAK, *141։*

Լուսանկ. 47

***147. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** հյուսիսային պատի արևմտյան մասում, ներքուստ, 6 տող.*



ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ ՄԱՄՔԱՆ ԴՈՒՍՏՐ
ՀԱՍԱՆԱ, ԻՄ ՈՐԴԻ| ՎԱՂԹԱՆԿ
ԶԻՄ ՈՍԿԻ ԱՌԳՆՃԱՆԻ ԳՈՆՃԷՆ
ՏՎԱՔ| ԶՍԲ ՍԻՈՆԻ ՏԱԿԻ ՀՈՂՆ
ՎԱՐԴԱՊԵՏԵՆՑ ԱՌԱՔ, ՍԲ ՈՒԽՏՍ|
ՏՎԱՔ: ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԽԱԲԱՆՔ :Բ:
ՊԱՏՅԱՐԱԳ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԾԱՌ|ԶԱՐ|
Դ,ԱՐ,ԻՆ :Ա: ԻՆՁ :Ա: ԻՄ ՈՐԴՈՑՆ
ՍԵԽԱԴԻ. ՈՎ ԽԱՓ|ԱՆԷ ԴԱՏԻ ՑԱՑ.
Ի ԹՎ,, :ՉԿԷ: (1318):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 141; Ալիշան, 114; МАК, 138;
Լուսաձկ. 46*

***148. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** հարավային պատի արևմտյան մասում, արտաքուստ, 11 տող.*



ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՑ. ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԲ. ՍԵԾ ՊՄՐՈՆ ԲՈՒՐԹԷԼԻՆ ԵՒ| ՈՐԴՈՑ ԻՒՐՈՑ ԲԵՇՔԵՆԱ ԵՒ ԻՆԱՆԻԿԻՆ. ԵՍ ԳՈՆՑԷ ԱՄՈՒՍԻՆ ՎԱՐՀԱՄԱՑ, ՈՐԴՈՑ ՇԱՀՈՒՈՒՆԵ|ՑՈ, ԴՈՒՍՏՐ ԽՈՍՏՐՈՎԿԱ՝ ՑԱՉԳԷ ՏԱՐ,Ս,ԱԻՃԵԱՆՑ, ԵՏՈՒ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԵՒ ՀԵ|ՐԵԱՆԵԱՑ ԻՄՈՑ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՎԱՍՆ ՀՈԳԻՈՐԴԵԱՑ ԻՄՈՑ ՈՒՔԱՆԱ, ԱՄԱՏԻՆ ՈՐ ՏՂԱ ,Ա,ԻՐԱՒՔ Ի| ՔՍ ԿԱՏ,ԱՐ,ԵՑԱՆ. ԴԻՏԻ ՍԲ ԳԵՐԳՆ ԻՒՐ ՀԵՐԵՆԱՒՔՆ, ԻՒՐ ԽԱՉԻՆ ՄՏԱՒՔՆ. Ի ՀԱՄԱՄԱ|ՏԷՍՆ՝ ԶԳԱԶԱՐԱՓՈՍԻՆ ԷԳԻՆ՝ :Բ: :Ռ: ԴԵԿԱՆ ԳՆՈՒԱԾՔ. ՍԻ :Խ: ԳԵԿ,ԱՆ, ԳՆՈՒԱԾ| ԲԱՄԲԱԿ ՀՈՂ ԵՒ ՀԱՄԱՄԱՏԷՍՆ ՈՒ ՁՈՐՁԱՔԱՐԻՆ ՀՈՂՆ Ի ՑԱՂՋՐՏԱՊ. ԵՒ ՄԽԱ|ԲԱՆՔՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :ԺԲ: ՊԱՏԱՐԱԳ ՍԲ. ԽԱՉԻՆ ՏԱՒՆԻՆ :Գ: |ԱՄԱՏԻՆ, :Գ: ՈՒՔԱՆԱ. :Խ:-ԻՑ ՏԱՒՆԻՆ՝ :Գ: ՊԱՏԱՐԱԳ. :Բ: ԳՈՆՑԻՆ, :Բ:| ԹՈՒԽՏԵՆՈ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱԻՐՀՆԵ,Ն, ՑԱՑ. ԵՒ ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ: |ՈՎ ՀԱԿԱ,ՌԱ,ԿԱ՝ ՄԵՐՈՑ ԿԱՄ ՑԱԻՏԱՐԱՑ, ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ ՔԻ. ԹՎ. :ՉՂԳ: (1346):

Ծանոթ. Երրորդ և չորրորդ տողերի ՀԵՐԵԱՆԵԱՑ— անշուշտ ՀԵՐԵՆԵԱՑ=ՀԱՑՐԵՆ-ԵԱՑ—թողնում ենք ըստ գրվածի։

Հինգերորդ տողում ՍԲ. ԳԵՐԳՆ՝ ՍԲ. ԳԷՈՐԳԻ խոսակցական ձևն է։ Այդ եկեղեցին, հավանաբար, գյուղից երկու կիլոմետր հյուսիս, բարձր բլուրի վրա կառուցված համանուն մատուռն է, որը տեղացիների մոտ կոչվում է ՋԻՔԻ ՎԱՆՔ։

Վերջին տողում Ի ՔԻ տառերը գրիչը բաց է թողել տողամիջում և ավելացրել է տողատակին։

Հրատ. Ջալալեանց, 141—142։ Ալիշան, 115—116։ ՄԱԿ, 142։
Լուսանկ. 49

**149. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևմտյան պատի հյուսիսային մասում, արտաքուստ, 5 տող.*



ՍԲ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԻՆԻՆ. ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ԿԱՐԱՊԵՏՍ ԵՒ ԱՄ|ՈՒՍԻՆ ԻՄ ՏԻԿՆԱՆՑ ՏԻԿԻՆ ԶՄԵՐ ՀՈԳՒՈՑ| ԲԱԺԻՆ Ի ՍԲ ՈՒԽՏՍ ՏՎ,ԱՔ. Վ,ԱՐԴԱՊԵՏ, ՄԻԱԲԱՆՔ :Բ: ՊԱՏԱՐԱԳ ՏՎ,ԻՆ. ՄԻՆ ԻՆՋ :Ա: ԱՄՈՒՍՆԻ ԻՄ. ԿԱՏԱՐԻՉՔ ԱՒՐՀՆԻՆ ՑԱՑ.

Հրատ. Ջալալեանց, Բ, 142։ Ալիշան, 116։
Լուսանկ. 50

**150. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հարավային պատի արևելյան անկյունի ներքևի մասում, 5 տող.*



ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ՍԵՐՈԲ ԱԲ|ԵՂԷՍ ԱՌԻ ԲԱՇԱՐԱԹԻ| ՀՈՂՆ՝ ՋԱՂԱՑԻ ԳՈՒՌՆ, |ՏՎ,Ի Վ,ԱԽՄ ՍԲ. ԱԾԱԾՆԻՍ| [ՈՎ] Հ[Ա]ԿԱՌԱԿԻ ԱՆԻԾԱԾ [Է].

Հրատ. Ջալալեանց, Բ, 142։ Ալիշան,
Լուսանկ. 51

**151. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *հարավային պատին, թերի թողած, 3 տող.*



ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ ԱՄՍ|ԱՃԱՆ . . .

**152. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևելյան պատի ստորին մասում, խաչի տակ, 2 տող.*



ԱՑ˪Ս˩ Խ˪Ա˩ՋՍ ԲԱՐԷ ԽԱԻՍ ՍԱՎՏԻՆ

**153. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևելյան պատի ստորին մասում, խաչի տակ, 2 տող.*



ԱՑՍ ԽՍՋՍ ԱՏԻՊԷԿԻՆ

**154. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևմտյան պատի վերին մասում, մեծ մասը եղծված, 6 տող.*



ԿԱՄԱԻՆ ԱՑ ԵՍ . . . . . . . . . . . . . |
ՍԲ ՈԻԽՏԻՍ ԵԻ ՄԻՍ[ԲԱՆՔ . . . . . . . . |
. . . . . . . . . . . . . . . . . . . |
. . . . . . . . . . . . . . . . . . . |
. . . . . . . . . . . . . . . . . . . |
. . . . . . . . . . . . . . . . . . . |

Լուսանկ. 52

**155. Ս. ՀՈՎԱՆՆԵՍԻ** *արևմտյան մուտքի հյուսիսային կողին, արտաքուստ, 19 տող.*



ԿԱՄ˪ԱԻՆ˩ ԱՑ| ԵՍ ՄԵԹԱՐ| ԵԿ˪Ե˩Ղ˪Ե˩Ց˪ՈՑ˩Ս ՆՈՐ|ՈԳՄԱՆ ԱԻԳՆ|ԱԿԱՆ ԵՂԷ. ՎԱՐԴԱՊԵՏ,| ՄԻԱՑԲ˪ԱՆ˩ՔՍ| ՋԱԻ˪Ա˩Գ :Ե: ՇԱԲԹԻՆ : Բ: ՊԱ|ՏԱՐԱԳ ՍԱՀ|ՄԱՆԵՑԻՆ : Ա :| ԻՆՁ՝ Մ˪Ե˩ԹԱՐԻՍ, :Ա: ՀԱԻՐ[ԵՐ]| ՄԱԻՐՆ. Կ|ԱՏԱՐԻՋՔ| ԱԻՐՀՆԻՆ ԱՑ. Խ|ԱՓԱՆԻՉ|ՔՆ ԴԱՏԻՆ| ՏԵԱՌՆԷ։

*Ծանոթ. ՀԱԻՐ ՄԱԻՐՆ բառերի մեջ ըստ երևույթին ԵԻ-ի փոխարեն գրիչը սխալմամբ ԵՐ է գրել։*

*Այս եկեղեցին կոփածո քարերով շարված լինելու հետևանքով՝ իր վրա չունի արձանագրություններ։ Սա միակն է, որ գրված է մուտքի կողի սրբատաշ նեղ քարի վրա և կարևոր է, որովհետև վերաբերում է հուշարձանի նորոգմանը, բայց չունի թվական։ Կարծում ենք, որ հիշատակված ՄԵԹԱՐԸ նույն անձնավորությանն է, որը գյուղամիջում կանգնեցրել է այժմ ընկած մեծ խաչքարը, իր եղբայր Թութլուբեկի հիշատակին՝ ՉԾԷ։ թվականին։ Այս արձանագրությունը ևս, փոքր տարբերությամբ, նույն ժամանակներին պետք է գրված լինի (տե՛ս № 188)։*

Լուսանկ. 53

**156. Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ** *արևելյան պատի ստորին մասում, խաչի տակ, 3 տող.*




ԱՅՍ ԽԱՉՍ ՆԱՂԱՐԻՆ

ՎԱՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

**157. ԽԱՉՔԱՐ**, *զեղաքանդակ, պատվանդանի վրա. ս. Հովհաննեսի արևմըտյան պատին, խաչի թևերի տակ, ներքևի մասում և պատվանդանի վրա.*



ԹՎ. :ՉԽ: (1291) ԵՍ ԱՂԲԱՐՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՇԱՀԱՊՈՆ ՅԱՂԱԻԹ(Ս) ՅԻՇԵՔ: ԳԵՐԵԶՄԱՆՆ Է . . . . . . . .

Ծանոթ. *Վերջին մասը գրված է պատվանդանի զույգ խորանների մեջ և եղծված է։*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 142։ Ալիշան, 117։ (առանց պատվանդանի մասի)։*
Լուսանկ. 54

**158. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *երկթեք, օրորոցաձև, գտնվում է ս. Աստվածածնի արևելյան պատի տակ, 4 տող.*



ԵՍ ՎԱՐԴՊԵՏ ԿԱԶՄԵՑԻ ՏԱՊԱՆԱՆԻՍ ԱՄՈՒՍՆՈՑ ՍԹԵՐՈՅՍ. ՈՉ ՈՐԴԻ ՈՒՆԷՐ ՈՉ ԱՂԲԷՐ. ՈՎ ԿԱՐԴԷՔ ՅԱՂԱԻԹ(Ս) ՅԻՇԷՔ.
ԹՎ. :ՉԽԵ: (1296):

Ծանոթ. *Գրված է գոտիաձև. տապանաքարի երեք կողերին։*

*Հրատ. Ալիշան, 117։ Քաջբերունի, Արարատ, 1889 թ., Ե, 286։*
Լուսանկ. 55



**159. ԽԱՉՔԱՐ**, *պատվանդանի վրա. ս. Հովհաննեսի արևմտյան պատի տակ. ճակատին, շրջանակներին և տակին. 10 տող.*

ԿԱՄԱՒ ՀԶԱՒ,Ր,ԻՆ ԱՅ. ՑԱՐՀԻԱԿ|ԱՆ ՔԱՒՋԱՊԵՏՈՒԹ. ՏԵԱՌՆ ՅՈՎԱՆՆԻՍԻ| ԵՒ Ի ՊԱՏՐՈՆՈՒԹԵ. ՏԵՂ.ՈՅՍ ՈՒՔ|ԱՆԱ, ՀԱՍԱՆԱ, ԱՄԱՏԻՆ. ԵՍ ՆՈՒ,ԱՍՏ ՈԳԻ Վ.ԱՐԴԱՆ Վ.ԱՐԴԱՊԵՏ ԿԱՆԳՆԵՑԻ| ԶՍՔ. ՆՇԱՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ԻՆՁ| ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԻՄՈՅ ՄԽԻԹ|ԱՐԱ ԵՒ ՄԵՐՈՑՆ, ՈՐ Ի ՍՄՍ. ՆԿԱՐ|ԵԼ ԿԱՆ ՏԻՊ ՆՇԱՆԱՑ:

ՍՔ ԳՐԻԳՈՐ: Ի ԹՎ. :ՉԾԹ: (1310):

Ծանոթ. *Ութերորդ տողում ՄԵՐՈՑՆ կարելի է նաև ՏԵՐՈՑՆ կարդալ:*

Հրատ. *Ջալալեանց, Բ, 142: Ալիշան, 117:* MAK, *144:*
Լուսանկ. 56



**160. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *կանգնած է բակի արևմտյան, փոս մասում.*

ՍՔ ՍՏ,ԵՓ,ԱՆՈՍ.| ՅԱՆՈՒՆ ԱՅ.| ԵՍ ՍՏԵՓԱՆՈՍ ԱԲԵ|Ղ.ԱՅ ԿԱ,Ն,ԿՆԵՑԻ| ԽԱՉՍ ՓՐԿՈՒ|ԹԵ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂ.ԱՑ. |ԹՎ. :ՊԼԲ:
(1383)

Ծանոթ. *Հասարակ խաչքար է:*



**161. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *ընկած է բակի արևմտյան, փոս մասում, 6 տող.*

ԹՎ.ԻՍ :ՊԼԴ: (1385) |ՅԱՆՈՒՆ ԱՅ ԿԱՆԿՆԵՑԱՒ| ՍՔ. ԽԱՉՍ Ի ԲԱ|ՐԷԽԱՒՍՈՒԹԻ. Մ,Ա,ՐՏԻՐՈՍԻՆ.

Ծանոթ. *Հասարակ խաչքար է:*



**162. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *կանգնած է բակի արևմայան, փոս մասում.*

ԵՍ ԱՊԱՇԽԱՐՈՂՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԵ. ՀՈԳՈՅ ԻՄՈ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՒՐ ԻՄՈ, ԲՈՎԱՆԴԱԿ ԱԶԳԱԿԱՆԱՑ:
ԹՎ. ՊԿԲ: (1413):

*Հրատ. Ջալալեանց, Բ, 143: Ալիշան, 117:*
Լուսանկ. 57

**163. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *կանգնած է ս. Հովհաննեսի արևմայան պատի տակ, միջտեղից երկու կես եղած.*



ԿԱՆԿՆԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ[ՒՆ] ՀՈԳՒՈՅՍ ՋԱՆԻԿԻՆ, ԾՆՈՂԱՑ ՈՒ [ԵՂԲԱՒՐ]
ԹՎ. ՊԿԴ: (1415):



**164. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ**, *կանգնած է ս. Հովհաննեսի արևմայան պատի տակ, 5 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ[Ս] ՎԱՆԻԿՍ ԿԱՆԿՆ[Ե]ՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ[Ս] ՍԱՒԹԱՆԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒՆ ԽՈՐՈՅ.[Ս] ԹՎ. ՊՀԹ: (1430)

Լուսանկ. 58



### 165. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ, 4 տող.

ԿԱ[Ն]ԿՆԵՑԻ ՉԽ[Ա]ՉՍ ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅ ՓԱՇԻԿԻՆ

Թ̅Վ. ՊՁԱ: (1432):

Ծանոթ. *Սա մի փոքրիկ խաչքար է, բակից գլորված-ընկած, եկեղեցիների արևմայան կողմում, ձորի մեջ, խիստ ջարդոտված:*

Լուսանկ. 59



### 166. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.

Թ̅Վ. :ՊՁԳ: (1433) Ա̅Ծ ՈՂՈՐՄԻ ԳՐԻԳ[Ո]ՐԻՆ ՈՒ ՍԻՐՄԻՆ:

Ծանոթ. *Խաչքարը գլորվել է բակի հյուսիսային եզրից և գտնվում է ձորն իջնող լանջի թեքության վրա:*

*Վերջին անձնանունը կարելի է նաև ՍԻՐՏԻՆ կարդալ, բայց այդպիսի անուն հայանի չէ այլուստ:*

### 167. ԽԱՉՔԱՐԻ *շրջանակներին և թևերի տակ. 7 տող.*



. . . . ՈՐ ՎԱՂՈՒՑ [Վ]ԱԽՄԱՆ] ԷՐ ՏՎԱԾ. ԵՍ ԱՅԼ ՏՎԻ Մ̅Բ ԱԾԱԾՆԻՍ. ՅԻՇ[Ա]ՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ. ՈՎ ՀԱԿ[Ա]Ռ[Ա]Կ[Ի] ՄԱՍՆ ԿԱ[Ց]ԵՆ[Ի] ԵՒ ՉՈՒԴ[Ա]ՅԻ] :ՅԺԸ: ՀԱ[ՅՐԱ]Պ[Ե]ՏԱՑ [ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ] Թ̅Վ. :ՊՁԴ (1435):

Ծանոթ. *Խաչքարն այժմ ագուցված է ս. Հովհաննեսի արևմտյան անկյունում, պատի մեջ՝ երեսով հարավ, վերին ձախ անկյունը ջարդված է:*

Լուսանկ. 60

*(երևում է մի կողմը միայն)*

**168. ԽԱՉՔԱՐԻ վրա, 5 տող.**



ԹՎ.| :ՌԴ: (1555) ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ | ՏԱՄՈՒՐՏԱՇԻՆ, Բ[է]ԿԻ|ՃԱՆԻՆ. Ղ.ԱՐ[ԻԲՇԱ]ՀԻՆ, ՈՐ ՏԱՐԻ . . . . . . . . ՑԻ[Շ]ԵՑ[է]Ք Ի ՔՍ:

Ծանոթ. *Խաչքարը բակից գլորված-ընկած է հուշարձանի արևելյան կողմի ձորը։ Սպիտակավուն քարից է և խիստ ջարդոտված։*

Լուսանկ. 61

*(Թվականը չի երևում)*

**169. ԽԱՉՔԱՐԻ քիվին, 2 տող.**



ԵՍ Ա[Կ]Ո[Բ] ԱԲԵՂ[Ա] ԿԱՆԿՆԵՑ[Ի] ԶԽԱՉՍ ՀՈԳ|ՈՑՆ ՓՐԿՈՒԹԵ. ՍԵՐՈԲ ԵՊ[Ի]Ս[ԿՈ]Պ[Ս]ՍԻՆ. ԹՎ. :ՌԺԸ: (1569):

Ծանոթ. *Գտնվում է ս. Աստվածածնի հարավ-արևմուտքում, 5 մետր հեռու։*

*Հրատ. Ջալալյանց, Բ, 143։*

Լուսանկ. 62



**170. ԽԱՉՔԱՐ, *ընկած է բակի արևմտյան, փոս մասում, ճակատին և տակին, 3 տող.***

ԽԱՉՍ ՓՐԿՍԻԹԵ Հ[Ո]Գ[Ո]Ց|Ն | ՀԱՅՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ.| ԹՎ. :ՌՂԸ: (1649)

*Հրատ. Ալիշան, 117։*

Լուսանկ. 63

**171. ԽԱՉՔԱՐ, *խրված գետնի մեջ, բակի արևմտյան, փոս մասում, ճակատին 4 տող.***



ԵՍ ՀԱՅՐ[Ա]ՊԵՏ ԱԲԵՂ[է]Ս[] ԿԱՆԿՆ|ԵՑԻ ԶԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԵՆ ՀՈԳՈՑՆ| ՄԱՐԻՆԱԻՆ. Ց[Ի]ՇԵՑԷՔ Ի ՔՍ | ԹՎ. :ՌՂԸ: (1649):

Ծանոթ. *Ըստ Քաջբերունու և Ալիշանի ՀԱՅՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ, սխալ է. ջարդված մասը և տառերի մնացորդները միայն Արեղես կարող են ընթերցվել։*

*Հրատ. Ալիշան, Սիսական 117։ Քաջբերունի Արարատ, 1889, Ե, 286։*

Լուսանկ. 64

**172. ԽԱՉՔԱՐԻ** *բեկորի քիվին. ընկած է բակում. 1 տող.*

ԽՍՂԱՋԱՐ ԱԲԵՂԱՑ — ԵՍ ՂԱԶԱՐ[ԱՐ] ԱԲԵՂԱՑ

Լուսանկ. 65

**173. ԽԱՉՔԱՐԻ** *բեկորի վրա. ընկած է բակում. 3 տող.*

· · · · ·–ԲԷՐՈՍԻԴԵՌ-ԱՅԲ

· · · · ԱՂԲԷՐՈՍԻ ԴԵՌԱՑԲ[ՈՑՍ]

.Թ: — ԹՎԻՆ · · · :Թ:

ՈՅՍ

**174. ՔԻՎԻ ԲԵԿՈՐԻ** *վրա, ընկած է բակում. 3 տող.*

· · · · · · ·Ի · · ·ԱՆԷՅԻԽՉՍ

✝

· · · · · ·Կ[Ա]ՆԿ[Ն]Ե[Ց]Ի Խ[Ա]Չ[Ս]

ԲԼՂԱՏԱՐԻՆ · · ·

ԲԼՂԱՄԱՐԻՆ–Ք

**175. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ.**

Այս է հանգիստ Ղամբարին, որ կիսաւրեայ հանգեաւ
ի Քս. թվին :ՌԸ: (1559):

Ծանոթ. *Այս տապանաքարը մեր այցելության ժամանակ արդեն չկար. ըստ հրատարակիչների նրա վրա քանդակված է եղել որսի տեսարան. հեծյալ՝ նետը ձեռին և բազեն՝ բազուկին. մահակներով զինված մարդիկ, ցուլ, առյուծ և մատովակներ։*

Հրատ. *Ջալալեանց, Բ, 143։ Ալիշան, 117։ Քաջբերունի, Արարատ, 1899, Ե, 286։*

*Վանքի բակում եղած խաչքարերի վրա Վ. Սիսոեը կարդացել է հետևյալ հինգ արձանագրությունները, որոնք սակայն մեջ է բերել ռուսերեն թարգմանությամբ։ Այժմ դրանք տեղում չկան, ուստի տալիս ենք հայերեն թարգմանությունը։*

**176. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ի թվ. :ՉԽ: (1291) Ես Ամբար կանգնեցի զխաչս · · · ·

Հրատ. MAK, *144։*

**177. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ի թվ. :ՊԿԲ: (1413) Ես Սմբատ · · · · կանգնեցի զխաչս.

Հրատ. MAK, *145։*

**178. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Ի թվ. :ՊԿԴ: (1415) Ես · · · · կանգնեցի զխաչս ի փրկութիւն
ծնողաց իմոց և եղբաւր · · ·

Հրատ. MAK, *145։*

**179. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Կամաւն Այ ես · · · · · ետու ի սբ Ածածինս
յիշատակ ծնողաց իմոց Յովանիսի · · · · ի թվ. ։ՊՁԴ։ (1435)։

Հրատ. ՄԱԿ, 145։

**180. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ.**

Կանգնեցի խաչս ի փրկութիւն հոգոյ Մարիամայ.
յիշեցէք ի քս. թվ. ։ՌԸ։ (1559)։

Հրատ. ՄԱԿ, 145։

ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԵՐԻՆ ԵՎ ԲԱԿՈՒՄ



*181. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եկեղեցու հարավում, ճանապարհի եզրին, բութ անկյուն գլխով, որի ճակատին և շրջանակներին.*

ԹՎԻՍ ։ՃԼԹ։ (1290) ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ
ՌՍՏԱԿԵՍ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ
ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ։

Հրատ. Ջալալեանց, Բ, 139, Ալիշան, Սիսական, 111։

*182. ԽԱՉՔԱՐ, կանգնած է եկեղեցու հարավում, կից նախորդին, կիսովին կոտրված և ընկած. պատվանդանի վրա չորս տող, որոնցից առաջինը լրիվ հողմնահարված.*



· · · · · · · · |· · · ԱՐՇԱ · · ·
ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԶԱՅՍ ՅՈՎԱՆԻՍԻ
ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Ծանոթ. Հավանաբար ժամանակակից նախորդին։



5—362




**183. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է գյուղամիջի ս. Գևորգ եկեղեցու հյուսիս-արևելյան մույթի մեջ, կողքանց, երեսով դեպի հարավ. շրջանակներին և վերին մասում, 4 տող.*

ՅԱՆՈՒՆ ԱՑ. ԵՍ ՊԱՍՏԵՂ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ
Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ ԿԱՄՊԻՐԳԷԼԻՆ.
ԹՎ. :ՊՂՁ: (1447):

Մանոթ. *Հիշատակված երկու անձնանունների վերծանության ճշտությունը համարում ենք պայմանական։*

*Հրատ. Ալիշան, 111։*



**184. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված եկեղեցու արևմըտյան մուտքից վեր. փոքր, ավիատակավուն, ներքևի մասը կտրված է՝ համարեցրած նոր տեղին, կողքի երկու շրջանակների վրա՝ յուրաքանչյուրին երկու տող. 4 տող.*

ԱԾ ՈՂՈՐՄԻ ԽՈՆԴՇԻՆ ԵՒ ԴՍՏԵՐՆ
ՊԱՏԱՍՇԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ, ՀԱՒՐ ԽԱՉՈՒՄԻՆ
ԵՒ ՄԱՒՐՆ ՄԱՐԳԱՐՏԻՆ. ՈՎ ԿԱՐԴԱՅՔ
Ի ՔՍ ՅԻՇԵՑԷՔ

*Հրատ. Ջալալեանց, Բ, 139։ Ալիշան 111։*



**185. ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է եկեղեցու արևելյան պատին, որի մեջ լուսամուտ է բացված, տեղ-տեղ ջարդոտված. շրջանակներին մնացել է՝*

ԿԱՆԿՆԵՑԱՒ . . . . . | . . ԵՒ ԾՆՈՂԱՑ
ԵՒ ՁԱԽՍԿԱՑ . . . ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.



*186.* ***ԽԱՉՔԱՐԻ*** *բեկոր, ագուցված է եկեղեցու արևելյան պատին, երկու շրջանակներին մնացել է.*

ԵՍ ՊԱԿՈՐՍ ԿԱՆԿՆԵ|ՑԻ ԶԽԱՉՍ . . . .

*187.* ***ԽԱՉՔԱՐ,*** *մեծ, գեղաքանդակ ու պարզ. կանգնած է գյուղամիջի գլխավոր փողոցի եզրին, հեղեղատի ափին, շրջանակներին և ճակատին մեծ ու գեղեցիկ տառերով, 4 տող.*



ԵՍ ԳՐԳՈՐ ՈՐԴԻ Վ.ԱՐՀԱՄԱ ԾԱՑՐԻՆ, ՈՐ| ՄՆԱՑ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՍՄ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՅԻՇ[ԵՑԷՔ Ի]Ք(Րիստո)Ս. Թ(ո)Վ(ին) :ՉԼԱ: (1282):

Ծանոթ. *ԳՐԻԳՈՐ և ՈՐԴԻ բառերի մեջ ՈՐ վանկը վերաբերում է երկու բառերին ևս: Արձանագրություններում մեջ սովորական երևույթ է նախորդ բառի վերջին տառը համարել նաև հաջորդ բառի սկզբի տառ, նեթե նույն տառով է սկսվում:*

*ԳՐԳՈՐ և ՎԱՐՀԱՄ ձևերը խոսակցական լեզվի արտահայտություններ են, չենք ուղղում:*

*ԾԱՑՐԻՆ բառը սակավ է գործածված արձանագրություններում մեջ: Մեզ հայտնի է մի դեպք ևս Կեչառիսի վանքի Դավթի մի արձանագրության մեջ. թվագրված :ՈԿԳ: ավելի հաճախ է հանդիպում հիշատակարաններում: ԾԵՐ բառի հին ձևն է, ինչպես ՏԱՑՐ =տեր (տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, Գ, էջ 33 և ծանոթ.): Անհասկանալի է ՀԱՍՄ բառը, որը, սակայն, գրված է շատ պարզ:*

Հրատ. *Ջալալեանց, Բ, 139: Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 228:*
*Ալիշան, 112,*
Լուսանկ. 66



*188.* ***ԽԱՉՔԱՐ,*** *մեծ, գեղաքանդակ ու պարզ. ընկած է գյուղի հյուսիսային ծայրին՝ այգիների մեջ, որի շրջանակներին և խաչի թևերից վերև 6 տող.*

ԵՍ ՄԽԹԱՐՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ե(ղ)ԲԱՐԻ ԻՄ|ՈՑ ԽՈՒԹԼՈՒՊԷԿԻՆ, ՈՐ ՄՆԱՑ Ի ԹԱԼԻ[Ն]Ն. [ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.] Ի Թ(ո)Վ(ին) :ՉԾԷ: (1308):

Ծանոթ. *Խաչքարն ընկած է իր պատվանդանի մոտ, երեսնիվայր. շատ ավեցինք և կարդալուց հետո, նորից նախկին դիրքը վերականգնեցինք, անվնաս մնալու համար:*

*189.* **ԽԱՉՔԱՐ,** *կեսից ավելի ծածկված հողով. կանգնած է գյուղխորհրդի մոտ, փոքրիկ թմբի վրա. ճակատին 4 տող.*



ԿԱՄԱՒ ԱՑ. ԿԱՆԿ[Ն]ԵՑԱՒ ԽԱՉ|Ս Ի ԲԱՐԵԽԱՒՍ ԱԲՐՀԱՄԱՑ ՈՐ| ՄՆԱՑ Ի ՄՍՐ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԳՒԽ|ԱԹՈՒՆԻՆ ՈՒ . . . .

*Ծանոթ. Շարունակությունը հավանաբար ներքևի մասում է, որը չկարողացանք բաց անել։ Ժամանակակից պետք է լինի № 145 արձանագրությանը, գրված ՉԿԶ թ. ըստ որի Լիպարիտի որդի Սմբատը (Օրբելյան), հայտնում է որ գիրի է մնացել Մարամ։*

*190.* **Ս. ԳԵՎՈՐԳ** *մատուռի (Ձիքի վանք) արևմտյան մուտքի շրջանակներին և շուրջը. 22 տող*



ԿԱՄԱՒ ՀՉԱՒՐԻՆ ԱՑ. ԵՍ ՇԱՇ ՄԻԱԿԵՑՍ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ| ԵՂԲԱՅՐՆ ԻՄ ՄԱԹՈՒԽՆ ՇԻՆԵՑԱՔ ԶՄԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՑԱՂԱԳՍ ՓԱՌԱՒՈՐԵԼՈ ՍԲ ՆՇԱՆԻՍ, ՈՐ Է ՑԱՆ|ՈՒՆ ՍԲ|ՈՑՆ ԳԷՈՐԳԱ. ԶԱՒ|ՐԱՑՎԱՐԻՆ, ՈՐ| ՑԱՂԱԳՍ ՑԱՆԴՈՒՐԶԵԱԼ ԱՐՔԱՍԻԹԵԱՆ ՑՈՒՍՈՑՆ ԲԱ|ԶՄԱԶԱՐԶԱՐ ԱՇԽԱՏՈՒԹԲ ԵՒ| ՄԵԾԱՒ ՋԱՆԻՒ ՑԱՒԱՐՏՈՒՄՆ| ԱԾԵԱԼ ԿԱՏԱՐԵՑԱՒ. Ի ԹՎԻՍ :ՉԽԶ: (1297) Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒ|ԹԵ ՏՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍԻՒՆԵՑ| ԱԹՈՌԱԿԱԼԻ, Ի ՊԱՐՈՆ|ՈՒԹԵ ԱՅՍՄ ՏԵՂՈՋ ԳԵՂԱՑ|ՊԱՆԾ ԻՇԽԱՆԻՍ ՎԱՐՀԱՄԱ| ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏՈՀՈՑ ՄԱՄ|ՔԱՆԻՆ ԵՒ

ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈ ԳՈՆՑԱՒՆ ԵՒ ԳԵՂԵՑԿԱՊՏՈՒԳ ԾԱՂԿԱԽԵՂԱՑՆ ԱՒԵՔԱՆԱ ԵՒ ՀԱՄԱՆՄԱ: ԱՐԴ ԱՂԱՉԵՄ ԶՁԵԶ ՈՒՐԱԼՆ ՔԻ ՅԻՇԵՍՋԻՔ ԶԾԱԾ ՄԻԱԿԵՑԱ ԵՒ ԶԾՆՈՂՍՆ ԻՄ Ի ՄԱՔՐԱՓԱՅԼ ՅԱՂԱԻԹՍ ՁԵՐ. ԵՒ ՈՐ ՍՊԱՍԱՒՈՐ ԼԻՆԻՔ ՓԱՌԱԶԱՐԴ ԽՈՐԱՆԻՍ ՊԱՐՏԻՔ ԻՆՁ :Գ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ, ԱՄԵՆ ՋԱՒՐ ԳՐԻԳՈՐԻՆ ԶԾԱՌԶԱՐԴԱՐԻՆ ԵՒ ԶԱԽԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ ԻՆՁ ՄԱՏՈՒՑԱՆԷՔ ԾԱԾԻՍ, ՎԱՍՆ ՍԻՐՈՅՆ ՔԻ ԱՆԽԱՓԱՆ. ԵՒ ՈՐ ԱՆՓՈՅԹ ԱՌՆԷ, ԴԱՏԻ ՅԱՄԵՆԱԿԱԼ ԲԵՐԱՆԷՆ ԱՅ.

Ծանոթ. *Այս մասաառը գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ, գետակի ձախ ափին, բարձր և ուղղահայաց ըլրի գագաթին։*

*Հրատ. Ջալալեանց, Բ, 143—144։ Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 331—332։ Ալիշան, 112—113։*

***191. Ս. ԳՐԻԳՈՐ** եկեղեցու. ճակատաքարին. եկեղեցին գտնվում է գյուղի հարավային եզրին, այգիների մեջ. 6 տող.*

ԿԱԱՒՆԱՅԵՄՐ ՍՄԷՖՆՈՍ ԳԲ
ՄՎԻՎԴՄԿԵ ՂԻՍԳՐԳՈՐ Ր
ԻՆՋԻՆՉ ՈՒ ՄՏՐԵԼՄԻ
ԱԿԵ Կ Ի՝ՆԵԼ ԱՆԻՈ ՆՈՒՍ
ՅԱՂ ՆԵԼԻՈՎ ԽԱՏԱ·Է
ԴԱՄ··ԱՅ :Ն:Խ:Ե

ԿԱՄԱՒՆ ԱՅ· ԵՍ ՏՐ. ՍՏԵՓԱՆՈՍ ԳԻՐ ՏՎԻՎԱՐԴԱՊԵՏԻՆ,...ԿԵՂԻՍ ԳՐԳՈՐԻՆ ԶԻՆՁ ՄՏՈՒՏՔ ՈՐ ԵՎ ՄԻԱԿԵՑԻՆ · · · ՈՎ ԽԱՓԱՆԷ ԴԱՏԻ ԱՅ ԹՎ. :ՉԽԵ: (1296):

Ծանոթ. *Գրված է խաչերի արանքում. խիստ եղծված է. գծագրատարար լուսանկարը չի ստացվել։*

*Համանարար կապ ունի № 145 արձանագրության հետ, ուր հիշատակված է ՍԲ. ԳԵՐԳԻ (Գևորգի) եկամուտները Սիոնի վանքին հասկացվելու մասին։*

***192. ԽԱՉՔԱՐԻ** բեկոր (միջին մաս), ընկած է ս. Գևորգ մատուռի արևմըտյան փոքրիկ բակում. թևերի տակ.*

ԹՎ:Գ: :Է:Բ·ԿՆ ԹՎ. :ՊԼԲ: (1383) ԿԱՆԿՆԵՑԱՒ.

*ԱՌԻՆՋ ԳՅՈՒՂԱՏԵՂ*

***193. ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑՈՒ** հարավային պատուհանի քարի վրա եղել է.*

Աստուած ողորմեա Եղիսաբէթին.

*Հրատ. Քաջբերունի, Արարատ, 1889, Զ, 332։ Ալիշան, 118։*

## 15. ԱՐԿԱԶ ԵՎ ԱՐԿԱԶԻ ս. ԽԱՉ ՎԱՆՔ

*Այս գյուղի և վանքի մասին ավանդությունները ու պատմական տեղեկությունները հասնում են մինչև XII—XIII դարերը։ Այժմ գյուղն անմարդաբնակ է, իսկ վանքը հիմնովին վերակառուցվել է XIX դարում։ Ներկայումս արձանագրություններ ունեցող մանր հուշարձանները ցրված են վանքի շուրջը, գյուղատեղի ավերակների մեջ և գերեզմանատանը։*